

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2010 թ. նոյեմբերի 8-9-ը ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը մասնակցել է ք. Աստանայում (Ղազախստան) կայացած ԱՊՀ անդամ պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի հերթական 44-րդ նստաշրջանին և «Ղազախստանի վիճակագրությունը, արդյունքներն ու զարգացման հեռանկարները» թեմայով գիտաժողովին,
- ✓ 2010 թ. նոյեմբերի 8-11-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը մասնակցել է ք. Աստանայում (Ղազախստան) կայացած 2011թ. միջազգային զլոբալ համադրումների ծրագրի շրջանակում ԱՊՀ երկրներում միջազգային համադրումների աշխատանքների իրականացման համար սպառողական ապրանք-ծառայությունների ներկայացուցիչների քննարկմանը և համաձայնեցմանը վերաբերող հանդիպմանը,
- ✓ 2010 թ. նոյեմբերի 8-11-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Հազարամյակի զարգացման նպատակների մոնիթորինգ» թեմայով հանդիպմանը,
- ✓ 2010 թ. նոյեմբերի 11-12-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Բրյուսելում (Բելգիա) կայացած «Եվրոպական Հարևանության և գործընկերության գործիքի ներքո Էկոլոգիական տեղեկատվության միասնական համակարգի նախագիծ» թեմայով խորհրդատվական հանդիպմանը,
- ✓ 2010 թ. նոյեմբերի 17-19-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Շաբոյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած Արագ ահազանգման և բիզնես ցիկլի ցուցանիշներին նվիրված 3-րդ միջազգային սեմինարին,
- ✓ 2010 թ. նոյեմբերի 18-19-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը մասնակցել են ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Կանանց դեմ բռնությունների փորձագիտական խմբի երկրորդ հանդիպմանը,

- ✓ 2010 թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 3-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույունջյանը մասնակցել է ք. Կատմանդույում (Նեպալ) կայացած Երեխաների և չափահասների շրջանում հարկադիր աշխատանքի տարածվածության գնահատման մեթոդաբանության վերաբերյալ հանդիպմանը,
- ✓ 2010 թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 2-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը և մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան մասնակցել են ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած 2011թ. միջազգային զլոբալ համադրումների ծրագրի շրջանակում ՀՆԱ 1993թ. դրույթներին համապատասխան ազգային դրամով ՀՆԱ-ի տվյալների նախապատրաստման վերաբերյալ ԱՊՀ տարածաշրջանի երկրների վիճակագրական ծառայությունների մասնագետների սեմինար-խորհրդակցությանը,
- ✓ 2010 թ. դեկտեմբերի 6-8-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Թոխաթյանը մասնակցել է ք. Ստամբուլում (Թուրքիա) կայացած «Միգրացիայի վիճակագրություն» թեմայով սեմինարին,
- ✓ 2010 թ. դեկտեմբերի 12-18-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Մ. Երիցյանը մասնակցել են ք. Թբիլիսիյում (Վրաստան) կայացած «Միջազգային համադրումների ծրագիր» մեթոդաբանական օժանդակություն ցուցաբերելու և սպառողական ապրանք-ծառայությունների ներկայացուցիչների քննարկմանը և համաձայնեցմանը վերաբերող հանդիպմանը:

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2010 թ. նոյեմբերի 5-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույունջյանը և աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանում միգրացիայի կառավարման համակարգի հզորացման նպատակով Միգրացիոն պետական ծառայության աջակցություն» թեմայով սեմինարին,

- ✓ 2010 թ. նոյեմբերի 16-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության համակարգի գնահատում, նոր մոտեցումներ» թեմայով սեմինարին,
- ✓ 2010 թ. նոյեմբերի 16-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի 18 աշխատակից մասնակցել են ք. Երևանում կայացած «Ոչ ֆորմալ հատվածը և ոչ ֆորմալ զբաղվածությունը» թեմայով սեմինարին,
- ✓ 2010 թ. նոյեմբերի 19-21-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ս. Պողոսյանը, միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Հ. Եղիազարյանը և արդյունաբերության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Կ. Անտոնյանը մասնակցել են ք. Ծաղկաձորում կայացած «Տվյալների պաշտպանության սկզբունքները Հայաստանում և Եվրոպական Միությունում» թեմայով սեմինարին,
- ✓ 2010 թ. նոյեմբերի 22-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ԱՎԾ մարդահամարի վարչության պետ Ա. Մարտիկյանը, նույն վարչության պլանավորման և ծրագրա-մեթոդաբանական բաժնի պետ Գ. Նշանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը և միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Դոնորների հանդիպում 2011թ. մարդահամարի վերաբերյալ, օժանդակության հնարավորությունները քննարկելու նպատակով,
- ✓ 2010 թ. նոյեմբերի 23-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ա. Թոխայանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Աշխատանքային միգրացիայի վերաբերյալ վիդեո-կոնֆերանսին,
- ✓ 2010 թ. նոյեմբերի 23-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՀՀ արտաքին քաղաքականությանն առնչվող և ընթացիկ այլ հարցեր» թեմայով ՀՀ գործադիր իշխանության մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպմանը,

- ✓ 2010 թ. նոյեմբերի 24-26-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Աղետների ազգային դիտացանցի ստեղծման և աղետների գույքագրման/տեղեկատվական կառավարման համակարգի վերաբերյալ» հանդիպմանը,
- ✓ 2010 թ. դեկտեմբերի 8-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Առուշանյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Երրորդ կարգի ջրանցքների հետազոտության արդյունքների ներկայացմանը,
- ✓ 2010 թ. դեկտեմբերի 11-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների շրջանակներում Հայաստանին հասանելի ԵՄ գործիքները» թեմայով հանդիպմանը,
- ✓ 2010 թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Գևորգյանը և Վ. Դավթյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան, վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի պետ Լ. Պետրոսյանը և «Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն» ծրագրի կառավարիչ Բ. Գևորգյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «UNICEF-ի հետ 2010թ. համագործակցության ծրագրերը և 2011թ. անելիքները» թեմայով հանդիպմանը,
- ✓ 2010 թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի 25 աշխատակից մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցի շնորհանդեսին: